



ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ  
ՉԻՆ ՈՒ ՆՈՐ ԵՐԱԶԸ ԲՈԼՈՐ ՄԵԼԳՈՆԵԱՆՑԻՆԵՐՈՒՆ

**Հայկաշեն Ուզունեան**

Կ'ուզեմ յայտնել, թէ մեր վերոյիշեալ ծրագիրին իրականցումը քաջալերուեցաւ Լոս Անճելըսի Սանուցի վարչութեան կողմէ առաջի՛ն մէկ օրէն, երբ կարգ մը ուրիշներ դժգոհութիւններ յայտնեցին կամ անհաճոյ արտայայտութիւններ ունեցան՝ հիմնուելով սխալ տեղեկութեանց վրայ :

Ուրախ ենք, սակայն, հաստատելու, թէ երբ աշխատանքները սկսած են ու Մելգոնեանի վերակազմակերպումը սկսած է երեւան գալ, խոհունակութեան արտայայտութիւնները կը բազմանան ամէն կողմէ: Այս առիթով պիտի ուզեմ անդրադառնալ նաեւ ուրիշ երեւոյթի մը, որ երբեմն թեր ու դէմ գաղափարներու տեղի կու տայ : Կարգ մը Մելգոնեանցիներ Հաստատութեան նիւթական կարիքներուն օժանդակելու միտքին հետ հաշտ չեն, առարկելով որ Մելգոնեան հիմնադրամը բաւարար է այդ կարիքները գոհացնելու: Որպէս ընդհանուր սկզբունք ճիշդ չէ այս, մանաւանդ որպէս բարոյական պարտականութիւն, որպէս երախտագիտական զգացում: Տակաւին երբ նկատի ունենանք, թէ Մելգոնեանի առաւել կարելիութիւնները, մեր դրոշմը հայ հասարակութեան վրայ առաւել հիմնաւորող ազդակներ պիտի ըլլան, մեզմէ իւրաքանչիւրէն կը պահանջուի, որ Հաստատութեան միջոցները աւելի ընդարձակենք՝ զայն օժտելով արդիական բազմազան տուեալներով:

Որպէս ծանօթութիւն՝ կ'ուզեմ տալ հետեւեալ թուանըշանները. 1937-1938 դպրոցական տարեշրջանին, Մելգոնեան Կրթական Հաստատութեան տարեկան պիւտճէն էր 10,000 կիպրական ոսկի: 1987-1988 կրթական տարեշրջանին Հաստատութեան պիւտճէն 320,000 կիպրական ոսկի էր, որ կը համապատասխանէր 736,000 ամերիկեան տոլարի: Այս գումարին միայն 115,000 տոլարը մօտաւորապէս կը գանձուի աշակերտներէն, ուրիշ մօտաւորապէս 70,000 տոլար եկամուտ կու գայ Հ.Բ.Ը. Միութեան, Կիւլպէնկեան հիմնադրամներէն ու կիպրական պետութենէն՝ որպէս ուսանողական կրթաթոշակ: Ուրեմն, մնացած 551,000 տոլարը կը հայթայթէ Հ.Բ.Ը.Միութիւնը՝ Մելգոնեան հիմնադրամի եւ իր ազատ հիմնադրամներու եկամուտներէն: Ճիշդ պիտի ըլլայ յստակացնել նաեւ, թէ տոլարի անկումն ու տոկոսներու նուազումը վերջին տարիներուն առաւել եւս կը բարդացնեն Բարեգործականին կարելիութիւնները: Ահաւասիկ, ուրեմն, յստակ պատկերը: Տակաւին պէտք է հայթայթել, թէ ամէն տարի բազմապատկուող, կեանքի սղութիւնը եւ մանաւանդ մեր ուսուցիչներու թոշակներուն արագ յաւելումը — որակաւոր ուսուցիչներ կարենալ պահելու դիտաւորութեամբ — մեր

պիտճէն մեծ յաւելումներու պիտի ենթարկեն ու մեզ պիտի դնեն դժուար հեռանկարներու դիմաց:

Անշուշտ, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը՝ ինչպէս անցեալին, այսօր եւ ապագային ալ, գիտակցելով Հաստատութեան հայ կեանքին իր մատուցանած անփոխարինելի ծառայութեան, իր բոլոր միջոցներով պիտի ապահովէ Մելգոնեանի գոյատեւումը: Այս մտահոգութիւններէն առաջնորդուած, Բարեգործականի Կեդր. վարչութեան ու Մելգոնեանի վերաշինման յանձնախումբը կը ծրագրեն եկամտաբեր կալուած մը շինել Մելգոնեանի հողին վրայ: Այս կալուածը հաւանաբար պիտի արժէ մօտ 2,5 միլիոն տոլար: Այժմ այս գումարին գրեթէ մէկ միլիոնը ունի վերոյիշեալ յանձնախումբը՝ գոյացած հողին վաճառքէն աւելնալիք գումարով եւ եկած տոկոսներով: Հ.Բ.Ը.Մ.ի Կեդր. վարչութիւնը արտօնած է յանձնախումբին կարելի միջոցներով գոյացնել վերոյիշեալ գումարը: Երբ այս կալուածը կառուցուի, Մելգոնեանի պիտճէն նոր ներդրումներ պիտի ունենայ եւ յետագայ տարիները աւելի դիրքին պիտի ըլլան դիմագրաւել:

Վերադառնալով Սանուց միութեանց՝ Հաստատութեան հանդէպ անոնց վերաբերմունքին, յայտնի ճշմարտութիւն է, որ ոչ-պետական կրթական հաստատութիւնները կրնան գոյատեւել միայն իրենց Սանուց միութեանց երախտագիտական օժանդակութիւններով: Սաներ, շրջանաւարտներ, շատ մեծ գումարներ կը նուիրեն կրթական հաստատութիւններու, ուր իրենց ուսումնական պատրաստութիւնը ստացած են: Այդ «Alumni»ները ոչ միայն կ'օժանդակեն իրենց դպրոցներու պիտճէի ապահովման, այլեւ կ'ընդարձակեն, արդի ժամանակներու պահանջներուն կը պատշաճեցնեն այդ հաստատութիւնները ու կրթաթոշակներ կը տրամադրեն ուսանողութեան:

Անշուշտ, ինծի համար հաճոյք է յայտնել, թէ Լոս Անճելըսի Սանուցը քանի մը տարիէ ի վեր նման վերաբերմունք ունի մեր բոլորին սիրելի Մելգոնեան Կրթական Հաստատութեան հանդէպ: Անոնք հայթայթեցին զանազան կարգի օժանդակութիւններ՝ աշակերտութեան առօրեան հաճելի դարձնելու համար: Շատ յատկանշական էր Հաստատութեան 60-ամեակին իրենց կատարած այցելութիւնը, 10,000 տոլար նուէր փոխգիրը, որ կարելի դարձուց Մելգոնեանին ապահովել տաս համակարգիչներ, եւ ուրեմն, հաստատել համապատասխան դասընթացք Հաստատութեան մէջ: Անցեալ եւ այս կրթական տարշրջաններուն, Գալիֆոռնիոյ Մելգոնեան Սանուցին նիւթական օժանդակութիւնը կարելի դարձուց Լիբանանի մեր դժբախտ սաներուն Հաստատութիւն վերադարձը՝ անոնց ապահովելով ճանապարհածախսը:

Գնահատելի են անոնց ճիգերը ու բոլորս կը հրճուինք ցուցաբերուած այս պարտաճանաչ զգացումներով: Կան նաեւ ուրիշ շրջանակներ, որոնք նոյնպէս որոշ ճիգեր կ'ընեն օգնելու Հաստատութեան: Այժմ ժամանակն է, թերեւս, որ մեր սաները, մանաւանդ անոնք որ տնտեսական յաջողութեան գաղտնիքը գտած են, ընդարձակեն իրենց օժանդակութեան բարիքը եւ աւելի օգտակար ըլլան Հաստատութեան: Որքան նպատակայարմար եւ մեզի համար ճիշդ պիտի ըլլար, որ Մելգոնեանցիներ կարենային՝ ստանձնել նոր կառուցուող շէնքերէն մէկուն կամ մէկ մասին շինութեան ծախսերը՝

որպես երախտագիտական արտայայտություն: Այս կոչը ուղղած էի Մելգոնեանցիներուն Մայիս 1987-ին, հիմնարկէքի հանդիսութեան ընթացքին:

Այժմ զայն կը կրկնեմ: Այս պարագային խնայուած գումարը պիտի յատկացուէր եկամտաբեր կալուածի շինութեան: Այս առընչութեամբ արդէն Կիպրոսի սաները կատարեցին առաջին հանգանակութեան արշար եւ ունին խոստումներ 25,000 տոլարի: Կայ նաեւ Յ. Թահմազեանի նուէրը Կեդրոնը նոյնպէս 25,000 տոլար: Ուրեմն, արդէն իսկ նախաձեռնութիւնը եղած է ու վստահաբար մեր սաները ամէն տեղ պիտի չթերանան իրենց պարտականութեան կատարումին մէջ եւ Հաստատութիւնը այս անգամ եւս երախտապարտ պիտի մնայ իր սաներուն :

Հ. ՌԻ.

